## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

**Անկախ Պետությունների Համագործակցության շրջանակներում կնքված բազմակողմ պայմանագրերի դադարեցման մասին**

Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունները, այսուհետ՝ Կողմեր,

ղեկավարվելով Անկախ Պետությունների Համագործակցության պետությունների ղեկավարների խորհրդի 1999 թվականի ապրիլի 2-ի՝ «Անկախ Պետությունների Համագործակցության մարմինների կառուցվածքի կատարելագործման և բարեփոխման մասին» որոշմամբ,

Անկախ Պետությունների Համագործակցության իրավապայմանագրային հենքի գույքագրման նպատակով,

**համաձայնեցին հետևյալի մասին՝**

### Հոդված 1

Կողմերն արձանագրում են սույն արձանագրության թիվ 1 հավելվածում թվարկված պայմանագրերի դադարեցումը՝ դրանց գործողության ժամկետը լրանալու և հետագա պայմանագրեր կնքելու պատճառով:

### Հոդված 2

Սույն արձանագրության թիվ 2 հավելվածում թվարկված պայմանագրերը դադարեցնում են իրենց գործողությունն այդ պայմանագրերի մասնակից պետությունների միջև հարաբերություններում՝ սույն արձանագրությունն ուժի մեջ մտնելու օրվանից:

### Հոդված 3

Սույն արձանագրության թիվ 1 և թիվ 2 հավելվածները դրա անքակտելի մասն են կազմում:

**Հոդված 4**

Սույն արձանագրությունն ուժի մեջ է մտնում այն ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերն արձանագրությունն ստորագրած Կողմերի կողմից կատարվելու մասին վերջին գրավոր ծանուցումն ավանդապահի կողմից ստանալու օրվանից:

Կատարված է Մինսկ քաղաքում, 2000 թվականի դեկտեմբերի 1-ին, մեկ բնօրինակից՝ ռուսերենով: Բնօրինակը պահվում է Անկախ Պետությունների Համագործակցության գործադիր կոմիտեում, որը սույն արձանագրությունը ստորագրած յուրաքանչյուր պետության կուղարկի դրա հաստատված պատճենը:

**Ադրբեջանի Հանրապետության կողմից՝**

*/ստորագրություն/*

**Հայաստանի Հանրապետության կողմից՝**

*/ստորագրություն/*

**Մոլդովայի Հանրապետության կողմից՝**

*/ստորագրություն/*

**Ռուսաստանի Դաշնության կողմից՝**

*/ստորագրություն/*

**Բելառուսի Հանրապետության կողմից՝**

*/ստորագրություն/*

**Տաջիկստանի Հանրապետության կողմից՝**

*/ստորագրություն/*

**Վրաստանի կողմից՝**

*/ստորագրություն/*

**Ղազախստանի Հանրապետության կողմից՝**

*/ստորագրություն/*

**Ղրղզստանի Հանրապետության կողմից՝**

*/ստորագրություն/*

**Թուրքմենստանի կողմից՝**

--------

**Ուզբեկստանի Հանրապետության կողմից՝**

*/ստորագրություն/*

**Ուկրաինայի կողմից՝**

*/ստորագրություն/*

*Հավելված թիվ 1*

*«Անկախ Պետությունների Համագործակցության շրջանակներում կնքված բազմակողմ պայմանագրերի դադարեցման մասին» 2000 թվականի դեկտեմբերի 1-ի արձանագրության*

## ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԸ,

**որոնք դադարեցրել են իրենց գործողությունը գործողության ժամկետը լրանալու և հետագա պայմանագրեր կնքելու հետ կապված**

| Համարը՝ ը/կ | Պայմանագրի անվանումը | Ստորագրման վայրը և ամսաթիվը |
|---|---|---|
| 1. | Համաձայնագիր տարանցման կարգի մասին | քաղ. Մոսկվա, 08.02.92 թ., ԿՂԽ |
| 2. | Համաձայնագիր 1992 թվականին առևտրատնտեսական համագործակցության բնագավառում Համագործակցության պետությունների փոխհարաբերությունների կարգավորման մասին | քաղ. Մինսկ, 14.02.92 թ., ՊՂԽ |
| 3. | Համաձայնագիր Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների շրջանակներում գիտատեխնիկական համագործակցության մասին | քաղ. Մոսկվա, 13.03.92 թ., ԿՂԽ |
| 4. | Համաձայնագիր Անկախ Պետությունների Համագործակցության շրջանակներում գիտատեխնիկական ուղիղ կապերի մասին | քաղ. Մոսկվա, 13.03.92 թ., ԿՂԽ |
| 5. | Համաձայնագիր Անկախ Պետությունների Համագործակցության շրջանակներում գիտատեխնիկական օբյեկտների համատեղ օգտագործման մասին | քաղ. Մոսկվա, 13.03.92 թ., ԿՂԽ |
| 6. | Համաձայնագիր Անկախ Պետությունների Համագործակցության շրջանակներում գիտական և գիտամանկավարժական կադրերի պատրաստման և նրանց որակավորման փաստաթղթերի ճանաչման բնագավառում համագործակցության մասին | քաղ. Մոսկվա, 13.03.92 թ., ԿՂԽ |
| 7. | Համաձայնագիր Համագործակցության միացյալ զինված ուժերում և Համաձայնագրի մասնակից պետությունների զինված ուժերում չափումների միասնականություն | քաղ. Տաշքենդ, 15.05.92 թ., ԿՂԽ |

| Համարը՝ ը/կ | Պայմանագրի անվանումը | Ստորագրման վայրը և ամսաթիվը |
|---|---|---|
| | ապահովելու մասին | |
| 8. | Համաձայնագիր հակաօդային պաշտպանության համակարգի մասին | քաղ. Մոսկվա, 06.07.92 թ., ՊՂԽ |
| 9. | Համաձայնագիր անցումային շրջանում Անկախ Պետությունների Համագործակցության միացյալ զինված ուժերի գլխավոր հրամանատարության գործունեությունը կազմակերպելու մասին | քաղ. Մոսկվա, 06.07.92 թ., ՊՂԽ |
| 10. | Համաձայնագիր սպառազինության և ռազմական տեխնիկայի միջպետական ստանդարտացման աշխատանքների կազմակերպման մասին | քաղ. Մոսկվա, 13.11.92 թ., ԿՂԽ |
| 11. | Համաձայնագիր զինվորական կադրերի պատրաստման մասին | քաղ. Մոսկվա, 13.11.92 թ., ԿՂԽ |
| 12. | Համաձայնագիր «Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների պաշտպանության նախարարների խորհրդի մասին» հիմնադրույթի մասին | քաղ. Մինսկ, 22.01.93 թ., ՊՂԽ |

*Հավելված թիվ 2*

*«Անկախ Պետությունների Համագործակցության շրջանակներում կնքված բազմակողմ պայմանագրերի դադարեցման մասին» 2000 թվականի դեկտեմբերի 1-ի արձանագրության*

**ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԸ,**
**որոնց գործողությունը դադարում է**

| Համարը՝ ը/կ | Պայմանագրի անվանումը | Ստորագրման վայրը և ամսաթիվը |
|---|---|---|
| 1. | ԱՊՀ մասնակից պետությունների ղեկավարների խորհրդի համաձայնագիր զինված ուժերի և սահմանապահ զորքերի մասին | քաղ. Մինսկ, 30.12.91 թ., ՊՂԽ |
| 2. | Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների միջև համաձայնագիր ռազմավարական ուժերի վերաբերյալ | քաղ. Մինսկ, 30.12.91 թ., ՊՂԽ |
| 3. | Համաձայնագիր ընդհանուր նշանակության ուժերում զինվորական երդման մասին | քաղ. Մոսկվա, 16.01.92 թ., ՊՂԽ |
| 4. | Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների համաձայնագիր ռազմավարական ուժերում զինվորական երդման մասին | քաղ. Մոսկվա, 16.01.92 թ., ՊՂԽ |
| 5. | Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների միջև համաձայնագիր միասնական պաշտպանական բյուջե ձևավորելու և Համագործակցության պետությունների զինված ուժերի ֆինանսավորման կարգի մասին | քաղ. Մինսկ, 14.02.92 թ., ՊՂԽ |
| 6. | Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների միջև համաձայնագիր ռազմավարական ուժերի կարգավիճակի մասին | քաղ. Մինսկ, 14.02.92 թ., ՊՂԽ |
| 7. | Համաձայնագիր Համագործակցության մասնակից պետությունների զինված ուժերի սպառազինությամբ, տեխնիկայով, նյութական միջոցներով ապահովման, վերանորոգող ձեռնարկությունների արտադրական գործունեության, գիտահետազոտական և փորձարարական-կոնստրուկտորական | քաղ. Մինսկ, 14.02.92 թ., ՊՂԽ |

| Համարը՝ ը/կ | Պայմանագրի անվանումը | Ստորագրման վայրը և ամսաթիվը |
|---|---|---|
| | աշխատանքների կազմակերպման սկզբունքների մասին | |
| 8. | Հայաստանի Հանրապետության, Բելառուսի Հանրապետության, Ղազախստանի Հանրապետության, Ղրղզստանի Հանրապետության, Ռուսաստանի Դաշնության, Տաջիկստանի Հանրապետության, Թուրքմենստանի և Ուզբեկստանի Հանրապետության միջև անցումային շրջանում ընդհանուր նշանակության ուժերի մասին համաձայնագիր | քաղ. Մինսկ, 14.02.92 թ., ՊՂԽ |
| 9. | Համաձայնագիր պաշտպանության հարցերով Անկախ Պետությունների Համագործակցության բարձրագույն մարմինների լիազորությունների մասին | քաղ. Կիև, 20.03.92 թ., ՊՂԽ |
| 10. | Համաձայնագիր Անկախ Պետությունների Համագործակցության միացյալ զինված ուժերի գործունեության իրավական հիմքերի մասին | քաղ. Կիև, 20.03.92 թ., ՊՂԽ |
| 11. | Համաձայնագիր Անկախ Պետությունների Համագործակցության միացյալ զինված ուժերի համալրման և դրանցում զինվորական ծառայություն անցնելու սկզբունքների մասին | քաղ. Կիև, 20.03.92 թ., ՊՂԽ |
| 12. | Համաձայնագիր անցումային շրջանում միացյալ զինված ուժերի ընդհանուր նշանակության ուժերի կարգավիճակի մասին | քաղ. Կիև, 20.03.92 թ., ՊՂԽ |
| 13. | Համաձայնագիր Անկախ Պետությունների Համագործակցության սահմանապահ զորքերի կարգավիճակի մասին | քաղ. Կիև, 20.03.92 թ., ՊՂԽ |
| 14. | Համաձայնագիր անցումային շրջանում միացյալ զինված ուժերի մասին | քաղ. Կիև, 20.03.92 թ., ՊՂԽ |
| 15. | Համաձայնագիր ԱՊՀ մասնակից պետությունների պետական սահմանների և ծովային տնտեսական գոտիների պահպանության մասին | քաղ. Կիև, 20.03.92 թ., ՊՂԽ |
| 16. | Համաձայնագիր Համագործակցության սահմանապահ զորքերի համալրման և դրանցում զինվորական ծառայություն անցնելու սկզբունքների մասին | քաղ. Տաշքենդ, 15.05.92 թ., ՊՂԽ |
| 17. | Համաձայնագիր Համագործակցության սահմանապահ զորքերի ֆինանսավորման կարգի մասին | քաղ. Տաշքենդ, 15.05.92 թ., ՊՂԽ |

| Համարը՝ ը/կ | Պայմանագրի անվանումը | Ստորագրման վայրը և ամսաթիվը |
|---|---|---|
| 18. | Համաձայնագիր Անկախ Պետությունների Համագործակցության միացյալ զինված ուժերում և մասնակից պետությունների զինված ուժերում իրավապահ մարմինների մասին | քաղ. Տաշքենդ, 15.05.92 թ., ՊՂԽ |
| 19. | Համաձայնագիր Սահմանապահ զորքերի սպառազինությամբ, ռազմական տեխնիկայով և այլ նյութական միջոցներով ապահովման, գիտահետազոտական և փորձարարական-կոնստրուկտորական աշխատանքների կազմակերպման սկզբունքների մասին | քաղ. Տաշքենդ, 15.05.92 թ., ԿՂԽ |
| 20. | Համաձայնագիր Անկախ Պետությունների Համագործակցության միացյալ զինված ուժերի հետախուզական ապահովման կազմակերպման մասին | քաղ. Տաշքենդ, 15.05.92 թ., ԿՂԽ |
| 21. | Համաձայնագիր Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների ղեկավարների խորհրդի և կառավարությունների ղեկավարների խորհրդի ընթացակարգի ժամանակավոր կանոնների մասին | քաղ. Տաշքենդ, 15.05.92 թ., ՊՂԽ |
| 22. | Համաձայնագիր սահմանապահ զորքերի կառավարման համակարգի տեղեկատվական ապահովման և գաղտնիքների պաշտպանության մասին | քաղ. Մինսկ, 26.06.92 թ., ԿՂԽ |
| 23. | Համաձայնագիր սահմանապահ զորքերի զինծառայողների և նրանց ընտանիքի անդամների, աշխատողների և ծառայողների բժշկական ապահովման կազմակերպման մասին | քաղ. Մինսկ, 26.06.92 թ., ԿՂԽ |
| 24. | Համաձայնագիր գիտատեխնիկական տեղեկատվության միջպետական փոխանակման մասին | քաղ. Մինսկ, 26.06.92 թ., ԿՂԽ |
| 25. | Համաձայնագիր առանձին պետությունների կողմից ազգային արժույթ սահմանելու դեպքում ռուբլու գոտու պետությունների շահերի պաշտպանության մասին | քաղ. Մոսկվա, 06.07.92 թ., ՊՂԽ |
| 26. | Համաձայնագիր սահմանապահ զորքերի գլխավոր հրամանատարի մասին | քաղ. Մոսկվա, 06.07.92 թ., ՊՂԽ |
| 27. | Համաձայնագիր Անկախ Պետությունների Համագործակցության պետությունների ղեկավարների խորհրդին և կառավարությունների | քաղ. Բիշքեկ, 09.10.92 թ., ՊՂԽ, ԿՂԽ |

| Համարը՝ ը/կ | Պայմանագրի անվանումը | Ստորագրման վայրը և ամսաթիվը |
|---|---|---|
| | ղեկավարների խորհրդին կից խորհրդատվական տնտեսական աշխատանքային հանձնաժողով ստեղծելու մասին | |
| 28. | Համաձայնագիր ռուբլին որպես օրինական վճարային միջոց պահպանած պետությունների միասնական դրամական համակարգի և համաձայնեցված դրամավարկային և արժութային քաղաքականության մասին | քաղ. Բիշքեկ, 09.10.92 թ., ՊՂԽ, ԿՂԽ |
| 29. | Համաձայնագիր Ռազմավարական ուժերի վերաբերյալ համաձայնագրում փոփոխություններ կատարելու մասին | քաղ. Մինսկ, 22.01.93 թ., ՊՂԽ |

Սույնով հավաստվում է, որ կցված տեքստը 2000 թվականի դեկտեմբերի 1-ին ստորագրված «Անկախ Պետությունների Համագործակցության շրջանակներում կնքված բազմակողմ պայմանագրերի դադարեցման մասին» արձանագրության հայերեն պաշտոնական թարգմանությունն է:

**Հայաստանի Հանրապետության**
**արտաքին գործերի նախարարություն**